ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 543-Ա/2 **«25» ապրիլի, 2023 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-ի N 2164-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ (PhD, PostDoc) ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20)-րդ ենթակետով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի փետրվարի 2-ի N 173-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2023 թվականի ապրիլի 12-ի նիստի արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի նոյեմբերի 23-ի N 2164-Ա/2 հրամանի համաձայն կազմակերպված գիտական և գիտատեխնիկական

գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական կադրերի (PhD, PostDoc) վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Ծրագրերի ֆինանսավորումը սկսել ըստ կից ցանկում նշված ժամկետների:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«25» ապրիլի, 2023թ.
N 543-Ա/2 հրամանի

ՑԱՆԿ
ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-ի N 2164-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ (PhD, PostDoc) ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ

Հ/հ	Ծածկագիր	Անվանում	Շահառու	Կազմակերպություն	Ընդունող կազմակերպություն	Վերապատրաստման տևողություն
1.	23PHD-1F007	Պիպերազին տեղակալված պիրանոպիրիդինների ածանցյալների հակաուռուցքային, հակավիրուսային և հակաօքսիդանտային հատկությունների ուսումնասիրություններ	Բուլոյան Սոնա Ազատի	ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ	Վ.Ա. Էնգելհարդտի անվան մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն)	2023թ. հունիս - 2023թ. սեպտեմբեր (106 օր)
2.	23PHD-1F001	Բարձր կենսաբանական ակտիվությամբ օժտված բուսական լուծամզվածքների քիմիական կազմի վերլուծություն LC-Q-Orbitrap HRMS առաջադեմ քրոմատոգրաֆիական համակարգի կիրառմամբ	Գինովյան Միքայել Մարտիկի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	Գդանսկի տեխնոլոգիական համալսարան (Լեհաստանի Հանրապետություն)	2023թ. հունիս - 2023թ. սեպտեմբեր (90 օր)
3.	23PHD-6A002	Պրագմատիկ եվրասիականության դրսևորումները հետխորհրդային տարածքում՝ Եվրասիական տնտեսական միություն և Թյուրքական պետությունների կազմակերպություն	Թորոսյան Վերոնիկա Աշոտի	ՀՀ ԳԱԱ «Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ	Սյոդերտորն համալսարանի բալթյան և արևելաեվրոպական ուսումնասիրությունների կենտրոն (Շվեդիայի Թագավորություն)	2023թ. սեպտեմբեր- 2023թ. դեկտեմբեր (91 օր)

4.	23PHD-1A005	Շատ փոփոխականի աստիճանային շարքերի անալիտիկ շարունակելիություն	Մկրտչյան Ալեքսանդր Ջանիբեկի	ՀՀ ԳԱԱ «Մաթեմատիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	Սիբիրյան ֆեդերալ համալսարան, մաթեմատիկայի և ֆունդամենտալ ինֆորմատիկայի ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն)	2023թ. սեպտեմբեր - 2024թ. հունվար (132 օր)
5.	23PHD-1F006	Darevskia ցեղի ժայռային մողեսների գլխուղեղի նեյրոնների թվի էվոլյուցիայի ուսումնասիրությունը	Պետրոսյան Ռուզաննա Կիմի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	Չարլզ համալսարանի կենդանաբանության ամբիոնի էթոլոգիայի և էկոլոգիայի բաժին (Չեխիայի Հանրապետություն)	2023թ. մայիս - 2023թ. օգոստոս (91 օր)